



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



2001

2001

2001


Տ Ա Ն Ը
Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն Ը

Կ Ա Մ

Հ Ա Ր Ի Ի Ր Հ Ա Ր Յ Մ Ա Ն Յ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ը

Ա Շ Խ Ա Տ Ա Ս Ի Ր Ե Ա Ց
Մ Ի Հ Ր Ա Ն Ա Բ Ի Կ Ե Ա Ն

Մ Ա Ս Ն Ա .



معارف نظارت جلیله سنك رخصتیه طبع اولنشد در

Կ . Պ Ո Լ Ի Ս

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ե Ա Ր Ա Մ Ե Ա Ն

1884

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Չը գիտեմ թէ արդեօք կան անհատներ, որք կարենան պնդել կամ գէթ երեւակայել թէ « իրենք աշխարհի հետ գործ չունին, եւ չի պիտի ունենան, թէ երբէք չի պիտի խաբուին, թէ որ եւ է արկածի մը չի պիտի հանդավին » եւ սպա հետեւցնեն թէ « մենք երբէք օրէնք սովորելու պէտք չունիմք, քանզի մենք փաստարան ըլլալու չեմք : »

Արդ եթէ երբէք այսպէս առարկողներ կը գըտնուին, արդարեւ ոչինչ նուաղ արգահատելի են. գալով անոնց՝ որք ինձ հետ համամիտ են թէ « ամենայն ինչ մարդուս համար պտտահական է, եւ թէ ամէն ոք պարտի քիչ շատ պատրաստ կենալ եւ ամուր բռնել իւր գործ եւ գործողութիւնք, նամանաւանդ վերահասու լինել այժմու դատաստանական առանձնաշնորհմանց՝ որք անհուն օգուտներ կընծայեն. » այդպիսեաց համար, թէ որ բոլորովին անտեղեակ են, սա դոյզն եւ խիստ համառօտակի աշխատասիրութիւնս պիտի նուիրեմ, որ իւր հաւանական թերութիւններովը հանդերձ կը յուսամ թէ ըստ բաւականի օգտակար պիտի ըլլայ, եւ շատերու շատ գաղտնիքներ պիտի պարզէ, որք դուցէ որ մը վանոնք պատահական փորձանքէ մը ազատեն :

Այս գրքոյկս ի մասնաւորի կը յանձնարարեմ,

Նախ իգական սեռի՝ որք ի հարկէ արտաքին գործաւնութեանց գաղտնիքներէն բոլորովին անտեղեակ եւ շնորհիւ փափկասուն քաղաքակրթութեան ! ! արդէն տիրող լեզուի, այսինքն թրքերէնի ուսումէն բոլորովին զուրկ ըլլալով, չեն կարող Տիւսթուրի նման օրինական գիրք մը կարդալ, ո՛ր մնաց հասկնալ, ո՛

րով, ինչպէս վկայ են այն ամեն կանայք, որք ո եւ է գործով մի անգամ Դատական կամ այլ նախարարութեան Դուռը ինկած են, ոչինչ նուազ յոգնութիւն, դժուարութիւն, վերջապէս վնաս կը կրեն:

Բ. Մեր Գերապատիւ Առաջնորդաց եւ Արժանապատիւ Հարց, որոնց իւրաքանչիւրն՝ իբրեւ հովիւ աշալուրջ, ժողովրդեան եւ հարիւրաւոր ծուխերու իրաւամբ խկ գլխաւոր խորհրդատուն է:

Գ. Մեր նորահաս երիտասարդաց՝ որք թեպետեւ վարժարանաց սեմերէն ամենայն ինչ կատարեալ կը ցատկեն շուկայի չորս անկիւններն, բայց զուրկ օրինական հմտութենէ զուրկ փորձառութենէ, միշտ ենթակայ են խաբէութեանց, մոլորութեանց եւ պէս պէս երեւակայութեանց, որոնց զէմ թէպէտեւ վահան մը կրնայ ըլլալ Տիւսթուրի ճոխ հատորներն. բայց այդ հատորներն ամենքն ի միասին 200 զրուշի չափ անհեթեթ գումարի մը՝ եւ ամսական 2 ոսկի թուշակաւ քաջ եւ օրինաց հմուտ տաճկաբան դասատուի մը ներկայութեանը պէտք ունին, ուստի տարակոյս չի կայ թէ այս գրքոյկս եւ իւր մէկ քանի յաջորդներն ով որ առնու, մէկ երկու դահեկանով պիտի յաղթէ սոյն երկու դժուարութեանց, քանզի աւօրեայ պատահական խնդրոց նկատմամբ լիուրի տեղեկութիւններ կը պարունակէ, նամանաւանդ թէ դիւրահասկանալի ըլլալու համար՝ գրեթէ ուսմական լեզուաւ գրուած է, եւ յաճախ հանդէպ ունի բուն Դատական թրքերէն բառեր, որոց յարգը ապաքէն գործածողք պիտի ճանչնան:

Մ. ԱՐԻԿԵԱՆ

ՏԱՆԸ ՓԱՍՏԱԲԱՆԸ

ԿԱՄ

ՀԱՐԻԻՐ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ (ՄԵՅՐԱՍ)

Հ. Ժառանգութեան մէջ անպատճառ բաժին (հըստէ, սէհմ) ունեցողները որոնք են:

Պ. Մեռնողին Հայրը, Մայրը, Որդին, Աղջիկը, Ամուսինը (զէվճ) կամ Կինը (զէվճէ):

ՄԵՌՆՈՂԻՆ ՇՕՐԸ ԲԱԺԻՆԸ

Հ. Երբ վերգինը մեռնի և միմիայն ամուսինը և հայրը թողու (թէրք), իւր ժառանգութիւնը ինչպէս կը բաժնուի:

Պ. Կէսը էրկանը և միւս կէսը իւր հօրը կը տրուի:

Ժառանգութիւն ըսելով ընդհանրապէս պէտք է հոսկինալ ննջեցեալին թէրէքէն, այսինքն շարժուն ստացուածքը (էմվալի մէնգուլէ) որք են իւր կահ կարասիքը, ապրանքը, առնելիքը և պատրաստի դրամը (նագտ):

Իսկ գալով վախճաներէն անշարժ ստացուածոցը՝ ինչպէս ատենը, խանութը, գետինը և այլն, ասոնք մասնաւոր օրէնքներ ունին, զորօրինակ երբ ննջեցեալը այդի մը ունենայ, ասկից իւր հօրը, մօրը, կնոջը կամ ամուսնոյն ոչինչ կը տրուի, այլ ամբողջը իւր որդիքը կը ժառանգեն:

Հ. Երբ Պարզեւը վախճանի (Ֆէվթ), և միմիայն հայր մը և կին մը ունենայ, իւր ժառանգութիւնը ինչպէս կը բաժնուի:

Պ. Ժառանգութեան $1/4$ ը կնկան իսկ մնացորդը իւր հօրը կը մնայ. ինչպէս եթէ մեռնողին թէրէքէին արժէքը (էսման) 40 ոսկի ընէ, 10 ոսկին իւր կնոջը իսկ 30 ոսկին իւր հօրը կը մնայ:

Հ. Եւ եթէ հայր մը և մէկ կամ աւելի արու զաւակներ (էվրատի զիւքիւր) թողու, այն ատեն ինչպէս կը բաժնուի:

Պ. Ժառանգութեան $1/6$ ը իւր հօրը, իսկ մնացորդը իւր տղայոց կիյնայ. զորօրինակ եթէ նընջեցեալին թէրէքէին (թողած գոյքը) արժէքը 6000 զըշ է, հօրը 1000, իսկ իւր տղուն կամ տղոցը 5000 զըշ. կիյնայ:

Բայց եթէ ննջեցեալը կին մը ունի, սոյն 6000 էն $1/8$, այսինքն 750 զըշ անոր տրուելէ յետոյ, մնացեալ 4250 ը տղայոց կը տրուի:

Հ. Եւ եթէ թողուցած զաւակը կամ զաւակները միմիայն աղջիկ ըլլան, այն ատեն ինչպէս կը բաժնուի:

Պ. Ննջեցեալին հայրը իւր որոշեալ $1/6$ բաժնէն ի զատ մնացորդ ևս կառնու, սա պայմանաւ որ եթէ ննջեցեալին աղջիկը մէկ հատ է ասոր բաժինն է կէս. զորօրինակ եթէ ժառանգին գումարը (եէքիւն) 60 ոսկի է, հօրը նախևառաջ 10 ոսկի և աղջկանը 30 ոսկի տրուելէ յետոյ, մնացորդ 20 ոսկին դարձեալ հօրը կը տրուի:

Իսկ եթէ աղջիկները մէկէն աւելի են, յայնժամ ասոնց բաժնին $2/3$ կիյնայ, որով փոխանակ 30 ոսկույ 40 կառնուն:

Հ. Երբ ննջեցեալը միմիայն հայր մը ունենայ այն ատեն ո՞րչափ կ'առնու:

Պ. Ստացուածքին (մալ) ամբողջը: Բայց եթէ կին մ'ալ ունենայ կնոջը բաժինը հանելէ յետոյ ինչ որ մնայ այն կ'առնու:

Հ. Ննջեցեալին հաւը այսինքն մեծ հայրը ինչ բաժին ունի:

Պ. Ննջեցեալը երբ հայր չունենայ, այն ատեն եթէ հաւը (ճէտա) ողջ (պէրհայաթ) է ճիշդ նընջեցեալին հօրը տեղ անոր բաժինները կ'առնու զորս վերը բացատրեցինք, այսու ամենայնիւ կան մէկ քանի բացառութիւններ:

ՄԵՌՆՈՂԻՆ ՄՕՐԸ ԲԱԺԻՆԸ

Հ. Երբ Ամբակու մը կամ Շաղիկը մեռնի, եւ միմիայն մայր, եղբայր և քոյր մը ունենայ ժառանգէն մօրը ինչ կ'իյնայ:

Պ. Ամբողջին $1/3$ ը, իսկ քրոջը մէկ և եղբորը երկուք կ'իյնայ, ինչպէս ժառանգին դումարը երբ 36 ոսկի է 12 ոսկի մօրը 16 եղբորը և 8 քրոջը բաժինն է:

Հ. Եւ երբ զաւակներ կամ մէկէ աւելի եղբայր կամ քոյրեր թողլով հանդերձ մայր մ'ալ ունենայ, այն սաւեն մայրը որչափ կ'առնու:

Պ. $1/6$ կ'առնու և մնացորդն ալ իւր զաւակներուն կը տրուի, զոր օրինակ. երբ Ամբակումբ կամ Շաղիկը մեռնի և մայր մը երկու աղջիկ եւ մէկ աղայ մը թողու, ժառանգութեան դումարը որ է 1200 զրուշ՝ մօրը 200, աղուն 500, և իւրաքանչիւր աղջկանցը 250 ական զրուշ կ'իյնայ (իսպակթ իտէր): Իսկ եթէ զաւակ չունենայ մնացորդը եղբարցը և քոյրերուն կը պատկանի:

ՄԷԿ ՉՕՐԷ ԵՒ ՄԷԿ ՄՕՐԷ ԾՆԱԾ

ՉԱՐԱՉԱՏ ՏՂԱՅՔ ԵՒ ԱՂՋԿՈՒՆՔ

Հ. Հարազատ (լիէպէվէյն) աղայք և աղջկունք ժառանգութեան բաժնոյն մէջ իրարմէ ինչ տարբերութիւն ունին:

Պ. Աղջկան ինչ որ արուի, աղուն անոր կրկինը կը արուի, ասոր պատճառը հեռեւեալ Արաբերէն Քէթմյան է (վի յիզգեֆերի միսլու հազգիլ իռնսէնէյն) որ ըսել է «արուին բաժինը երէն կրկինն է» զոր օրինակ. երբ Սօֆիկը մեռնի և երկու աղջիկ և մէկ մանչ աղայ թողու 80 ոսկուոյ ժառանգ-

դին 40 ը մանչուն, և աղջկանց ալ քսանական ոսկի կ'իյնայ:

Նմանապէս երբ ժառանգորդները եղբայր քոյր ըլլան, քոյրը ինչ որ առնէ եղբայրը անոր կրկինը կ'առնէ:

ԿԱՐԵՒՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Վէրի օրէնք ոսկի լեբեֆէին համար է, և երբ վախճանելոյ յիշժը՝ որան համ իսնոն-լե համ քեթին և այլ անչաթ սրաց-սաթ մէ, մանչը և աղջիկը հաւասար բաժին կ'առնու:

Հ. Երբ վախճանեալը միմիայն մէկ աղջիկ զաւակ թողու ինչ բաժին կ'առնու:

Պ. Ժառանգին կէսը, իսկ միւս կէսը իւր ազգականներէն ժառանգորդ եղողներուն կը բաժնուի:

Հ. Երբ մէկէ աւելի աղջիկ զաւակ թողու ասոնց բաժնին ինչ կ'իյնայ:

Պ. $2/3$. զոր օրինակ երբ Մարտիրոսը կամ կինը վախճանի և երեք աղջիկ զաւակ և մէկ հօրեղբայր մը թողու իւր 90 ոսկուոյ ժառանգին 60 ը աղջկանց, և մնացեալ 30 նալ հօրեղբորը կը մնայ:

ՆՆՁԵՏԵԱԼԻՆ ԷՐԿԱՆԸ ԲԱԺԻՆԸ

Հ. Երբ ննջեցեալը զաւակ և թող չունենայ էրիկը որչափ բաժին կ'առնու:

Պ. Կէս:
Հ. Եւ եթէ զաւակ կամ թողներ (ահֆաս) ունենայ որչափ կ'առնու:

Պ. 1/4. զոր օրինակ երբ նազիկ տուտուն վախճանի և էրիկը երկու աղջիկ և մէկ աղայ մը թողու, իւր 160 սակւոյ ժառանգէն 40 ը էրկանը 30 ամէն մէկ աղջկան և 60 ալ աղուն կը մնայ:

ՆՆՁԵՑԵԱԼԻՆ ԿՆԿԱՆԸ ԲԱԺԻՆԸ

Հ. Երբ ննջեցեալը զաւակ կամ թոռներ չունենայ, կինը որչափ բաժին կ'առնու:

Պ. 1/4. զոր օրինակ երբ խոսրովը մեռնի և կին մը թողու, իւր 80 սակւոյ ժառանգին 20 ը կնկան և մնացեալն ալ եթէ զաւակ է ի զատ ժառանգորդունի անոնց կ'իյնայ:

Հ. Եւ եթէ ննջեցեալը մտ կամ հեռու բողբոլին ժառանգորդ չունի այն ատեն կնոջը ինչ կ'իյնայ:

Պ. Ժառանգութեան կէտը, իսկ միւս կէտը պէյթ իւլ մալ (տէրութեան գանձ) ին կը մնայ:

Հ. Եւ եթէ զաւակներ կամ թոռներ ունենայ որչափ բաժին կ'առնու:

Պ. 1/8:

ՆՆՁԵՑԵԱԼԻ ՍԸ ՀԱՐԱԶԱՏ ՔՈՅՐԵՐԸ

Հ. Երբ ննջեցեալը միմիայն հարազատ քոյր մը ունենայ ինչ բաժին կ'առնու:

Պ. Ժառանգին կէտը, իսկ մնացեալը որոնք որ իրաւունք ունին անոնց կը արտի: Զոր օրինակ երբ Սոփիկը կամ Սմբակու մը մեռնի և քոյր մը

մայր և հօրեղբայր մը ունենայ, 60 սակւոյ ժառանգին 30 ը նախ և առաջ քրոջը, 20 ը մօրը իսկ մնացեալը որ է 10 հօրեղբօրը կը մնայ:

Հ. Եւ երբ մէկէն աւելի ըլլան ինչ բաժին կ'առնուն:

Պ. 2/3. զոր օրինակ երբ Եօրիկն կամ Էլէնին մեռնի և երեք հատ քոյր ունենայ, 1200 զրուշ ժառանգէն քոյրերուն 900 կ'իյնայ որ ամէն մէկուն 300 զրուշ ըսել է, դալով մնացեալ 400 ին այս ալ ննջեցեալին ուրիշ մերձաւորներուն կը մնայ:

Հ. Երբ վախճանեալը աղջիկ կամ աղուն աղջիկը թողու իւր քոյրերը ինչ կ'առնուն:

Պ. Մնացորդ բաժին, զոր օրինակ երբ Պոխորը մեռնի և երկու աղջիկ թոռ ունենայ իւր թողած 120 սակի ժառանգէն 2/3 ը որ է 80 աղջիկ թոռներուն, և 40 ը իւր քրոջը կը մնայ:

Հ. Եւ երբ մեռնողը արու զաւակ կամ թոռներ ունենայ քրոջը ինչ բաժին կ'իյնայ:

Պ. Ոչինչ, զոր օրինակ երբ Սամուէլը կամ Սոփիկը մեռնի և միմիայն արու զաւակ կամ թոռ ունենայ, իսկ հայր մայր կին կամ ամուսին չունենայ, 40 սակւոյ ժառանգին ամբողջը սոյն զաւակն կամ թոռանը կը մնայ:

ՆՆՁԵՑԵԱԼԻՆ ՍԵՄ ՍՕՐԸ ԲԱԺԻՆԸ

Հ. Երբ մեռնողին հայրը կամ մայրը ողջ չըլլայ այն ատեն մամը որչափ բաժին կ'առնու:

Պ. 1/6. զոր օրինակ երբ Տաքէսը մեռնի և մի-
միայն մէկ կամ երկու մամ և մէկ ալ հօրեղբայր
ունենայ, իւր 60 ոսկւոյ ժառանգէն տասնական
ոսկի մամիկներուն, և մնացեալ 40 ոսկին ալ հօ-
րեղբօրը կը մնայ:

Հ. ժառանգականութեան մէջ ուղղակի ու
բու արգելք է (իսգադ իտէր) .

Պ. Երբ մեռնողը՝ զաւակ ունենայ, թուանը ոչ
ինչ, հայր մայր ունենայ, մեծ հօրը կամ մօրը
ոչ ինչ, եղբայր (1) կամ եղբօր տղայ ունենայ,
հօրը մօրը կողմանէ ազգակից (խրսրմ) եղողնե-
րուն ոչ ինչ, եւ երբ հօրեղբայր կամ սորա տը-
ղայքը ունենայ, հօրաբրօժը մօրաբրօժը (խալէ) և
մօրեղբօրը (խալ) կամ ասոնց զաւակներուն ոչ
ինչ կիյնայ:

Նաևս երբ մեռնողը՝ եղբօր որդի ունենայ, իւր
քեռորդիներուն եւ մինչեւ իսկ միեւնոյն եղբօր
ազջիկներուն ոչ ինչ, եւ երբ հօրեղբօր տղայ ու-
նենայ միեւնոյն հօրեղբօր ազջիկներու ոչ ինչ
կիյնայ:

Անառասիկ վերոգրեալ արգելքները բացառող
(իյզահ) երկու օրինակ :

Ա Ռ Ա Ջ Ի Ն

Դիցուկ թէ Սուրբիկը մեռնի, եւ հայր, մայր, զա-

(1) Իայց եթէ քոյր եւ եղբօր ազջիկներ ունենայ,
հօր եղբայրը կամ զաւակունքն ալ կը մասնակցին, եւ
եթէ քրօջ զաւակներ ունենայ թէ հօր եւ թէ մօր
կողմանէ ազգականներն ալ կը մասնակցին:

ւակ, ամուսին, եղբայր, քոյր, եւ այլն չունենայ, այլ
մի միայն մօտէն ըլլալով Պօղոս եւ Աղաւնի անուն
եղբօր զաւակներ, եւ Խաչիկ եւ Նազիկ անուն քրօջ
զաւակներ թողու իւր ժառանգին ամբողջը Պօղոսին
կը մնայ, եւ միւսներուն ստակ մը (հապսէլի վահի-
տէ) անգամ չի տրուիր

Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Դիցուք թէ Մարութ աղան մեռնի եւ որդի կամ
ծնողը կամ ուրիշ մէկը չունենալով՝ միմիայն կին մը
եւ Տիգրան եւ Տիգրանուհի անուն հօրեղբօր զա-
ւակներ եւ Ներսէս անուն մօրեղբայր մը ունենայ՝
6000 ոսկւոյ ժառանգին 1500ը կնիկը՝ իսկ մնացեալ
4500 ոսկին ամբողջապէս Տիգրանը կուտէ: Իսկ Տիգ-
րանուհին՝ աղջիկ, եւ Ներսէսն՝ մօր կողմանէ ըլլալուն
բան մ'ալ չին կրնար առնուլ:

Իսկ թէ որ մեռնողը միմիայն հօրաքոյր, մօ-
րաքոյր, մօրեղբայր կամ ասոնց զաւակները ու-
նենայ, այն ատեն հօրաքոյրը (ամմէ) կամ զաւ-
կունքը՝ հօր կողմանէ ըլլալուն $\frac{2}{3}$. իսկ մօրաքոյրը
և մօրեղբայրը կամ զաւակունքը մօր կողմանէ ըլ-
լալուն $\frac{1}{3}$ բաժին կառնուն:

Հ. ժառանգորդ մը երբ իւր իրաւունքէն կը
կը զրկուի:

Պ. Երբոր ժառանգորդը (վարիս) ժառանգը
ձգողը (մուրիս) մեռուցած ըլլայ, կամ թէ երբ
մեռնողը Մահմետական իսկ ժառանգորդը Քրիս-
տոնեայ ըլլայ:

Նաև ժառանգորդը երբ օտար տերութեան մը հպատակ ըլլայ, բոլորովին ժառանգորդութենէ կը զրկուի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՏԵԱՆՔ

(ՄԷՀԱՔԻՄԻ ՆԻՋԱՄԻՅԷ)

Հ. Նիզալիյէ ի գատարաններն քանիւ կը բաժնուին :

Պ. Երեք մասի Ա. պիտայեթ մահիֆեմէսի (նախադատ տտեան) Բ. իսթ ինսափ մահիֆեմէսի (վերաքննիչ ատեան) Գ. Թէմեիզ մահիֆեմէսի (վճռալինջ ատեան). ըսել է դատ մը այս երեք գատարաններէն կրնայ անցնիլ :

Հ. Այս ատեաններուն իւրաքանչիւրը քանի ձիւղի (տախրէ) կը բաժնուի :

Պ. Երկերկու, մին հռզուրդիյէ (առևտրական) իսկ միւսը ձեզաիյէ (պատժական). զոր օրինակ նախադատ ատենի հուգուգի ճիւղը (մահքէմէի պիտայէթ հուգուգ տախրէսի) ելն կ'ըսուի :

Պէտք է գիտնալ որ հռզուրդի դատ ըսելով, առնելի տալիքի (ախլ ու իդա) տունի տեղի (էմլաք) պայմանադրութեանց (մուգավէլաթ) վերաբերեալ դատեր կը հասկցուի, որոնց համար դատարանը պատիժ չը տնօրիներ. այլ վէճի տակ (միւնաղաուն ֆիյհ) գտնուած դատին մէջ ո՞վ իրաւացի է և ո՞վ անիրաւ այն կորոչէ. բայց երբ անիրաւը ընդդիմութիւն (մուխալէֆէթ) ցուցնէ

այն ատեն է որ դործագիր պաշտօնեայն (իճրա մէմուրը) զանի կը նեղէ (թաղելի) :

Ընդհակառակը պատժական (ճէզաիյէ) դատեր ըսելով մարդուս ազատութիւնը (հուրրիյէթ) բռնաբարող արարքներ կը հասկցուի, որք են, մէկը արատաւորել (իխլալի նամուս), ծեծել (տարպ), վիրաւորել (ճէրհ), մեռցնել (գաթլ) ստացուածքը (մալ) գողնալ (սիրգաթ), յափշտակել (ղասպ), աւերել (թախրիպ), կեղծ բաներ շինել (սախթէքեարլըգ) և այլն, որոնց հեղինակը գատարանի կողմանէ անպատճառ պատժոյ կը դատապարտուի :

Հ. Նախադատ ատենի հուգուգի ճիւղը ինչ տեսակ դատեր տեսնելու պարտաւոր է :

Պ. Հռզուրդի վեճեր որոնց կարգադրութիւնը (հալլ ու թէսլիյէ) հաշտութեամբ (սուլէհն) կարելի չէ եղած, և թէ դատաստանի պէտք տեսնուած է, ուստի այս տեսակ դատերը առաջին անգամ սոյն գատարանը կը դատէ (մուհաքէմէ) :

Հ. Վերաքննիչ ատենի հուգուգի ճիւղը ինչ տեսակ դատեր տեսնելու պարտաւոր է :

Պ. Դատեր որք Ա. անգամ նախադատ ատենի մէջ տեսնուած են, բայց տրուած վճիռը երկու հակառակորդներէն մին (խառմէյուտէն պիրինի) գոհացուցած չէ :

Հ. Վճռաբեկ կամ վճռալինջ ատենի հուգուգի ճիւղը ինչ տեսակ դատեր տեսնելու պարտաւոր է :

Պ. Դատեր՝ որք թէ նախադատ և թէ վերաքննիչ կամ թէ սոսկ նախադատ ատենի մէջ տեսնուած են, բայց տրուած վճիռը երկու հակառակորդներէն մին դոհացուցած չէ, ուստի Թեմեիզի ատենը այդ դատերուն իլամները քննելով երբ կանոնի համաձայն դանէ, վերջնականապէս կը հաստատէ, ապա թէ ոչ վճիռը ջնջելով (ֆէսի) խնդիրը առ ուր անկ է հոն կը վերադարձնէ:

Հ. Երբ Պիտայէթի, կամ Իսթինաֆի, և կամ թէ Թէմեիզի դատարաններէն հուզուզի ճիւղին մէջ երկու հակառակորդներէն միոյն բացակայութեանը (ղըյապընտա) վճիռ մը տրուի սոյն հակառակորդը ինչ պէտք է ընել:

Պ. Պէտք է իլամը ձեռքը հասած օրէն մինչև 30 օր Իթիրագ աշէյ հէօֆիլ ընել այսինքն բողոք բառնալ այն դատարանին որ վճիռը տուած է, և անոր ջնջումը պահանջել:

Հ. Հուզուզի դատերու մէջ Իսթինաֆի պայմանաժամը (միւտտէթ) ո՞րչափ է:

Պ. Երբ վճիռը ՚ի բացակայութեան տրուած է, Իթիրագ ի 30 օրն ալ միատեղ հաշուելով 91 օր է, իսկ եթէ վճիռը երկու հակառակորդաց ներկայութեանը (միւվաճէհէսինտէ) տրուած է, յայնժամ իլամը (վճուագիր) հաղորդուած թուականէն մինչ 61 օր է:

Հ. Հուզուզի դատերու մէջ Թեմեիզի պայմանաժամը ո՞րչափ է:

Պ. Երբ վճիռը ՚ի բացակայութեան տրուած է

իթիրագ ի 30 օրն ալ ի միատեղ հաշուելով 120 օր է. իսկ եթէ վճիռը երկու հակառակորդաց ներկայութեանը տրուած է, յայնժամ իլամը հաղորդուած (թէպիր) թուականէն մինչև 90 օր է:

Հ. Պատժական (ճէզալիյէ) դատերու մէջ Իսթինաֆի և թէմեիզի պայմանաժամերն ո՞րչափ են:

Պ. Իսթինաֆինը իլամը հաղորդուած թուականէն մինչ 10 օր, իսկ Թէմեիզինը վճիռը արձակուած թուականէն մինչ 8 օր է:

Հ. Հոգուզի վերաբերեալ դատ մը իսթինաֆի կամ Թեմեիզ ընելու համար ի՞նչ պայման կայ:

Պ. Իսթինաֆի կամ թէմեիզ ընողը՝ պարտի նախապէս ընդունելի երաշխաւոր մը ցոյց տալ, թէ իւր հակառակորդին վնասները պիտի տուժէ (թազմին):

Տ Ո Կ Ո Ս

(Կիւղէշթէ . ֆաիզ , Ըեմա)

Հ. Ստակին տոկոսը որչափ ըլլայ նէ օրինաւոր (նիզամի) կը համարուի:

Պ. Երբ մէկ ոսկիին ամսական մէկ զրուշ ըլլայ. թէ որ տոկոսը այս չափէն վեր ըլլայ, պարտականը աւելին չի տալու, և եթէ տուած է հաշիւը դեռ չի մաքրուած աւելի տուածը մայր դրամին (րէս իւլ մալ) սեպել տալու (մահսուպ իթտիրմէյէ) իրաւունք ունի:

Հ. Երբ պարտամուրհակին մէջ տոկոսի պայ-

մանագրութիւն չըլլայ, անցած օրերուն տոկոսը կրնայ պահանջուիլ:

Պ. Ոչ երբէք. այլ սակայն երբ առնելիքուորը պարտքին համար դատի ելնէ, բաշան կամ դատարանին նախագահը (բէխ) արուած աղերսագրին վրայ պոռչորոչք (հրաման) քաշած թուականէն սկսեալ հարիւրին մէկ զրչ հաշուով տոկոս կը բանի:

Թ Է Ր Է Ք Է (Ննչեցեալին գոյքը)

ԳԱՍՍԱՄ կամ ԳԱՍԷՄ

(Ժառանգործ իւնը բաժնող պաշտօնեայք)

Հ. Երբ մէկը վախճանի, իւր գոյքը ժառանգորդացը (վերէսէ) մէջ բաժնելու համար Գասէմի պաշտօնեայք բռնի կրնան միջամտել (միտասիսէլէ):

Պ. Երբ ժառանգորդք ամէնքն ալ չտիահաս են, մինչև որ իրենք կամ իրենցմէ մէկը չի խընդրէ, գասէմի պաշտօնեայք ամենեւին չեն կրնար միջամտել. բայց եթէ ժառանգորդք ամէնքն ալ կամ ոմանք դեռ անչափահաս (նապալիդ) և անխելահաս (զայրի բէչիյա) են, ասոնք որք (եէթիյմ) կը համարուին, և որովհետև որբոց պաշտպանութիւնը Տէրութեան պարտականութիւնն է, ուստի գասէմի պաշտօնեայք իրենք իրենցմէ (խօտ պէ խօտ) կը միջամտեն և թէրէքէն արժէքի կը վերածեն:

Հ. Անչափահաս ժառանգորդաց ժառանգը գասէմի միջոցաւ գրուելէ (թահրիբ) և ստակի վերածուելէ յետոյ որոնց կը յանձնուի:

Պ. Վախճանելոյն թերէֆէն ըստ օրինի գրուելով ստակի կը վերածուի, և յետոյ մեռնողին թաղման (տէֆնիէ) և պատանքի (թէճհիղիյէ) ծախսերը և ճշմարիտ պարտքերը (տույունի սահիհա) և եթէ կտակ ունի, անի ալ զեղչուելով (թէնղիլ), մնացեալը որբոց անտուկին (էյթամ սանտղը) կը յանձնուի կամ փոխատուութեամբ (խտանէ թարիգի իլէ) երաշխաւորեալ վաւի ի մը կը տրուի:

Հ. Գասէմի միջոցաւ գրուած թէրէքէ եւ այլ բաներու համար սրչափ տուրք (խարճ) որոշուած է:

Պ. Գասէմի միջոցաւ գրուած թէրէքէին գումարումէն ննջեցելոյն պարտքերը և կտակը ի բաց հանելէ յետոյ, ինչ որ մնայ 100 զուրուշին 100 փարա բաժանման տուրք (բէամի դըամէթ) իսկ հազարին 60 փարա ալ արձանագրութեան ծախս (գայտիյէի տէֆթէր) որոշուած է ուստի այնչափ պիտի տրուի ոչ աւելի:

ՎԱՍԻ կամ **ՎԷԼԻ** (խնամակալ)

Հ. Վասի ի մը պաշտօնը ինչ է եւ ինչ տեսակ մարդ մը ըլլալու է:

Պ. Վասիները որ կրօնական ատենի (Շէրի շէ-

ըիֆ) կողմանէ կ'ընտրուին, պարտաւոր են իրենց խնամոց յանձնուած որբերուն բարւոք դաստիարակութեանը (թաալիմ ու թէրպլիէ) եւ մատակարարութեանը (թէայեիւշ) նայիլ, բայց ոչ թէ իրենց քսակէն այլ որբին ժառանգէն. Վասիները ընդհանրապէս որբոց ազգականներէն բայց երբեմն ալ դուրսէն կ'ընտրուին, սա պայմանաւ որ ընտրուած մարդը խելքը գլուխը, պատուաւոր (միւթէպէր), միանգամայն ունեւոր (միւթէմէվլվիլ) մէկը ըլլալու է:

Նաեւս երբ ունեւոր մէկը Աստուած մի արացէ ցնորի կամ խելադարի անոր գործոցը եւ ստացուածոցը կառավարութիւնը՝ (իտարէի ումուրի) կրօնական աշեւի կողմանէ վէլի մը կամ վասիլի մը կը յանձնուի:

Հ. Երբ վասին կամ վէլին շռայլութեամբ, եւ կամ թէ պարագայից բերմամբ, որբոց ժառանգութիւնը բճացնէ այն ատեն ով պիտի տուժէ:

Պ. Որբոց ժառանգը դեռ վասիլին չի յանձնուած, նախ և առաջ իրարու (եէքաիկէրինէ) երաշխաւոր, միայնգամայն ունեւոր Յ անձինք վասիէն երաշխաւոր կառնուին, որոնց երեքը մէկանց կամ մէջերնուն ով որ աւելի կարողութեան տէր է, պարտի տուժել ամբողջ գումարը, երբ վասին հատուցանելու անկարող դառնուի:

ՄԵՏԵՈՒՆ (պարտական)

Հ. Պարտքի համար դատապարտեալ (մահրիւմ) մէկը՝ երբ ոչ ստացուածք (մալ) ոչ թողակ եւ ոչ ալ արհեստ կամ վաստակ ունենայ, իւր պարտքը վճարելու համար արդեօք կը բանտարկուի:

Պ. Եթէ առնելիքւորը (տաին, կամ սահիպի մադլուպ) վստահելի գրերով (էվրագի միւթէպէրէ) ինչպէս մուխթարի կամ իմամի կամ թաղ, խորհրդոյ իմ ու խապերով կամ պատուաւոր անձինքներու խոստովանութեամբ կարենայ հաստատել (գիւրին բան չէ...) իւր պարտականին թաղուն կարողութիւնը (իգթիտար), այն ատեն օրական Յ զուրուշ վճարելով կրնայ բանտարկել տալ ապա թէ ոչ չի կրնար:

Բայց երբ պարտքը նափազաի համար է պարտականը կարողութիւն ունենայ չունենայ անպատճառ կը բանտարկուի:

Նաճագա ըսելով կը հասկցուի այն ապրուստը զոր պարտի վճարել էրիկ մը՝ իւր կնկանը նա ևս իւր զաւակներուն ապրուստին համար, եթէ զանոնք ապօրինի երեսի վրայ թողած է (թէրք), կամ զաւակ մը իւր ծնողացը համար՝ եթէ զանոնք առանց ապրուստի ձգած է:

Հ. Երբ պարտքով դատապարտեալ մէկը միմիայն մէկ տուն մը ունենայ իւր պարտուց փոխարէն կրնայ ծախուիլ:

Պ. Ոչ երբէք... բայց եթէ նստած տունը բա-

ւականէն աւելի է կամ խիստ բարձր գին մը ունի, բռնի կը ծախուի, և անոր փոխարէն ուրիշ տեղ մը իւր վիճակին յարմար և բաւականացուցիչ տուն մը կը տրուի իրեն:

Հ. Նմանապէս երբ պարտքով դատապարտեալ մէկը տէրութեան կամ մասնաւոր մէկու մը ամսականաւոր (միւլէզզաֆ) պաշտօնեայ ըլլայ, իւր ամսականին (մասշ) ամբողջը պարտքին հատուցմանը համար կրնայ բռնուիլ (սէքէօսթրօ. հաճողունապիլըւր մը):

Պ. Ոչ երբէք. Այլ մի միայն ամսականին մէկ չորրորդը կրնայ բռնուիլ, մինչեւ իսկ երբ առնելիքւորները մէկէ աւելի ըլլան սոյն մէկ չորրորդը (րուպ) իրենց մէջ բաժնելէ ի դատ ուրիշ բան չեն կրնար ընել.....:

Հ. Եթէ դատապարտեալը արհեստաւոր (էհլիսանաթ) ըլլայ պարտքին փոխարէն գործիքները (ալաթ ու էտէվաթ) կրնայ ծախուիլ:

Պ. Ոչ երբէք, սրովհետեւ այդ գործիքներուն շնորհիւն է որ մարդը իւր ապրուստը (ըզզ. մախէթ) կը ճարէ, զոր օրինակ տպարանապետի (մաթպաա սահլաի) մը մեքենայն, գրերը եւ այլ գործիքները, երկրագործի (չիֆթճի. էհլի զիրատթ) մը Զիֆթը չուպո խը, երկրագործին գործիքը, արօրի կենդանիներն և այլն) պարտքի փոխարէն երբէք չի ծախուիր:

Հ. Երբ մէկը իւր տունը պարտքի փոխարէն (մուգապիլ) գրաւ դրած ըլլայ (իսթիլլալ), իւր

պարտքը չի վճարած ժամանակ կրնայ ծախուիլ:

Պ. Եթէ երբէք պարտականին բնակարանը (մէսքէն. մէնզիլ) մէկ հատիկն ալ ըլլայ, դարձեալ կը ծախուի, և պարտքը կը հատուցուի:

Կ Ա Շ Ա Ռ Ք (ըըշվէթ)

Հ. Ի՞նչ բաներ կաշառք կը համարուին:

Պ. Մէկը իւր նպատակը (մէրամ) յառաջ տանելու (թէրվիյճ) համար, ու և է պաշտօնէի մը, օրէնքէ դուրս ու և է անուամբ ինչ որ տայ առնէ կաշառք կը կոչուի: Ուրեմն անձամբ եւ կամ թէ մէկու մը միջոցաւ (պիլ վասիթա) տրուած նուէրը կամ ընծայն (փէշքէշ), նաև երբ մէկը աւելի կամ պակաս գնով բան մը ծախէ կամ առնէ, այսինքն 60 ոսկի արժողութեամբ բան մը դիտմամբ 20 ոսկի աւելի կամ տասը ոսկի պակաս ծախէ կամ գնէ, այդ տարբերութիւնները կաշառք կը համարուին:

Հ. Կաշառքին պատիժը ո՞ր կը քայէ

Պ. Ոչ միայն կաշառք առնողը (միւրթէշի), այլ եւ տուողը (րաշի) և ասոնց միջնորդ (րաիշ) եղողը՝ Օրինաց առջեւ առ հասարակ պատժապարտ (միւսթէհազզը ճէզա) են, եւ առաջին անգամու համար ժամանակաւոր (մուվազգաթ) բերդարգելութեան (գալապէնա) կը դատապարտուին (մահքիւմ օլուրլար):

Մ Ե Ղ Ք (ճէրախմ)

Ե Ի

Պ Ա Տ Ի Ժ Ք (միւճազաթ)

Հ. Ըստ կանոնի պատժոյ ենթակայ մեղքերն կամ օրինազանցութիւններն (ճէրախմ) քանի կարգ են:

Պ. Երեք կարգ ուրք են. գաղպահաթ (թերութիւն. ճիւղնա (եղեռն) ճիւղայթ (ոճիր):

Հ. Գապահաթին փոխադարձ պատիժը որքան է:

Պ. 24 ժամէն մինչ մէկ շաբաթ բանտարկութիւն, եւ առ առաւելն 100 զրուշ տուգանք.

Հ. Ճիւղնախին փոխադարձ պատիժը ինչ է:

Պ. Մէկ շաբաթէ աւելի բանտարկութիւն, տուգանք (ճէզաի նագտի) և տէրութեան պաշտօններէ արտաքսում (դարտ):

Հ. Ճինայէթին փոխադարձ պատիժները որոնք են:

Պ. Մահ (իտամ), շղթայակապ տաժանելի աշխատութիւնք (քիւրէք) մինչ ցմահ. բերդարգել (դալա պէնտ). մշանջենաւոր արսոր (նէֆեի միւէպպէտ) և այլն:

Հ. Քաղաքական իրաւունքներէ (հուզուզի մէտէնիյէ) որոնք կը զրկուին (իսգաթ):

Պ. Ոճրագործներն (ճանիլէր). ահա այս դատապարտութեամբ է որ ասոնք պաշտօնէ եւ աստիճանէ կը զրկուին և երբէք ազգին կամ էս-

նաֆին մէջ պաշտօն, կամ դպրոցաց մէջ դասատուութիւն, որբոց խնամակալութիւն, կամ որ և է դատի մը մէջ փոխանորդութիւն չեն կրնար ընել, եւ թէ այդպիսեաց վկայութիւնը երբէք չի բռնուիր, եւ զէնք ևս չեն կրնար կրել:

Հ. Պատժապարտի (միւճրիմ) մը պատիժը փոխանորդաբար ուրիշի մը կրնայ արուել:

Պ. Ոչ. ուրեմն արեան փոխարէն արիւն (դըսաս) եւ ուրիշ մարմնաւոր պատիժ մը կրելու մասին փոխանորդ կամ երաշխաւոր չընդունուիր, բայց երբ սպաննողի (դաթիլ) կամ վիրաւորողի (ճարիհ) համար տիեէթ (արեան դին) որոշուի, ասոր վճարմանը մասին երաշխաւոր կ'ընդունուի:

Ե Ր Դ Ո Ւ Մ

Հ. Վկայ մը դատարանի առջև վկայութիւն տալէ առաջ ընդհանրապէս ինչ ընել պարտաւոր է:

Պ. Երգում ընել, սա եզանակաւ որ դատաւորք (հաքիմ) ամենայն պատկառանօք (թէմբինլէ) ոտքի կը կենան եւ վկայն եթէ Գրիստոնեայ է ձեռքը Ս. Աւետարանի (Ինճիլի շէրիֆ) վրայ կը դնէ, իսկ եթէ Մահմետական է Մուսհաֆի Շէրիֆի (Գուրան) վրայ, և եթէ Հրեայ է Սատուածաշնչի (Թէվրաթը Շէրիֆ) վրայ դնելով, Տաճկերէն լեզուաւ կամ եթէ այս լեզուն չի գիտեր իւր մայրենի լեզուաւը Վալլահի կըսէ որ Աստուծոյ

վրայ կերպնում ըսել է, եւ ասով կը հաստատէ թէ սուտ (խիլաֆ) չի պիտի խօսի:

Հ. Վկայները որ տեսակ խնդրոց մէջ երդում ընելու պարտաւոր են:

Պ. Մի միայն պատժական դատերու մէջ, իսկ հռզուգի վերաբերեալ դատերու մէջ վկայելու համար երդում ընելու պարտաւոր չեն, այլ ի պահանջել հարկին (լէտէլ իճապ) իրենց երդում կը տրուի (թահիֆ իթտիրիւր):

Հ. Համբներուն երդումը կընդունուի:

Պ. Այո. համբները ծանօթ ձեւերով կընան երդնուլ. և երբ երդնուն կամ երդումէ հրաժարին (նիւքիւլ), դատարանը ըստ այնմ կը վճռէ:

Հ. Պատժական դատերու մէջ դատախազին (միւտտաի) կամ դատախազեային (միւտտաի ալէյհ) արդեօք երդում կը տրուի:

Պ. Պատժական դատերու մէջ դատաւորը ոչ յանձաւորին եւ ոչ ալ յանձանքը կրողին, այլ ասոնց վկայներուն երդում կու տայ:

Հ. Հուզուզի (Առեւտրական) դատերու մէջ ո՞ր կողման երդում կիյնայ:

Պ. Երդումը ժխտողին (միւնքիւր) կիյնայ, որով խնդրոյն արտաքին տեսքը (ասլը) կը հաստատէ իսկ ապացոյցը (պէյեինէ) հակառակորդին պարտքն է որով սոյն արտաքին տեսքին հակառակը (խիլաֆը զահիրի) կը փաստէ զոր օրինակ:

Յակոբ աղան երբ պարտամորհակաւ մը Աւե-

տիս էֆէնտիէն 30 ոսկի պահանջէ եւ Աւետիան ալ պնդէ թէ ինքը իւր պարտքը հատուցած (էյֆա) է, բայց վստահութիւն ունենալուն համար ցարգ սէնէտը ետ չէ առած (խսթիրտաս) այն ատեն Յակոբ խնդրոյն արտաքին տեսքը՝ այսինքն պարտամորհակին ի հաշիւ ստակ առած չըլլալը հաստատելու համար՝ պարտաւոր է երդում մը ընել (այն ալ եթէ իւր հակառակորդը պահանջէ): Իսկ Աւետիան ալ իւր պարտքը վճարած ըլլալը հաստատելու համար պարտաւոր է ապացոյց բերել:

Այլ սակայն երբ սոյն Աւետիսը առանց ձեռքը մուրհակ մը գտնուելու դատի ելնէ այն պարագային մէջ Աւետիսը պարտաւոր է երդում մը ընել իսկ Յակոբն ալ փաստ բերել:

Հուզուզի դատերուն մէջ, մինչև որ երկու հակառակորդներէն՝ մին միւսին երդում ընելը չի պահանջէ, դատաւորը ինքն իրեն եւ ոչ մէկուն կընայ երդում տալ:

Հ. Երկու հակառակորդներէն (դարաֆէյն) մին երբ երդում ընելէ հրաժարի, դատարանը ինչ կը անօրինէ:

Պ. Երդումէ հրաժարողը ով որ է, անոր դէմ (պէյհինատէ) կը վճռէ, և ալ անկից յետոյ եթէ երդնուլ ուզէ օգուտ չընէր:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ (շէհատէթ)

Հ. Վկայք առ նուազն քանի հոգի ըլլալու են:

Պ. Երբ դատը Պատժական է մէկ հոգին ալ կը բաւէ, բաւական է որ պատժապարտին նշանները (էմարէլէր) համողիչ ըլլան, իսկ եթէ դատը Հռոգոռգի կը վերաբերի երկու էրիկմարդ (էր) և կամ թէ երկու կնիկ մէկ էրիկ մարդի հաշուով չորս կնիկ ըլլալու են. երբ վկայեց թիւը այս չափէն պակաս ըլլայ, դատաւորը չի կրնար վճռել (հիւրմ) այլ երբ պարզ տեղեկութիւն (իխպար կ'ընդունի):

Այլ սակայն այն դրամական խնդիրներ յորում կարելի չէ եղած էրիկմարդ դառնուիլ այն ատեն միայն երկու կանանց վկայութիւնը ընդունելի է:

Հ. Վկայութեան ամենամեծ պայմանը ո՞րն է:

Պ. Վկայն ինչ բան որ պիտի վկայէ պէտք է իւր աջօքը տեսած, (մուտեէնէ) և ականջովը լըսած ըլլայ, ապա թէ ոչ ես այս ինչէն լսեցի ըսելով վկայութիւն չըլլար:

Ահա ատոր համար է որ համբին և կոյրին (ամա) վկայութիւնը անընդունելի է:

Հ. Վկայի մը վկայութիւնը երբ չի բռնուիր:

Պ. Երբ վկայն՝ ի նպատտ (էհինտէ) վկայելիք մարդուն՝ ծնողքը կամ որդին կամ եղբայրը. կամ քոյրը կամ աղգականը (խըսըմ) կամ վարձեալն (էճիրի խասս) է ինչպէս սպասաւոր. գրագիր. վարժապետ և այլն. կամ առեւտուրի ընկերը (չէրիք) կամ խնամակալը (վասի վէլի) եւ կամ վէճի տակ եղող խնդրոյն մէջ դատական փոխանորդը կամ երաշխաւորը (քէֆիլ) կամ մունետիկն (տել-

լալ) է: Իսկ եթէ վկայն ասոնց գէմ (ալէյ-հինտէ) պիտի վկայէ, յայնժամ կ'ընդունուի:

Նաևս իբր վկայ չեն ընդունուիր անոնք որոնք Սաախոս (քեաղիպ) ճանջցուած են կամ քաղաքական իրաւունքէ զրկեալ են, կամ որու գէմ որ պիտի վկայեն, անոր հետ թշնամութիւն (ատավէթի տիւնեէվիյէ) ունին, ինչպէս տեղ մը կռուած (նիղա) կամ որ եւ է կերպով զրկանք տեսած (մաղտուր) են:

Ուստի դատ ունեցողներն՝ այսպիսեաց գէմ դատաւորին ուշադրութիւնը դրաւելու են, ապա թէ ոչ բռնի, (ճէպրէն) կը տարուին ու կը վկայեն:

Հ. Մանչ և աղջիկ տղայոց վկայութիւնը կը բռնուի:

Պ. Այո եթէ ԱՅ տարեկան և կամ ալ աւելի մեծ են, իսկ եթէ ԱՅ տարեկանէ վար են առանց երգման (պիլա թահլիֆ) կը վկայեն որով տուած վկայութիւնն իբր պարզ տեղեկութիւն (իխպար. մալիւմաթ) կը նկատուի:

Մ Ա Շ Լ Ի Ի Լ (անժառանգ)

Հ. Երբ մէկը առանց որդւոյ (պիլավէլէտ) վախճանի և անշարժ ստացուածներ (էմլալի զայրը մէգուլէ) ունենայ, այս ստացուածներն որու կը պատկանին:

Պ. Առանց որդւոյ վախճանեալ մը երբ վագժ

(որ և է բարեպաշտական հաստատութեան մը կտակեալ) տուն կամ խանութ կամ արտեայն ունենայ, եթէ երբէք ծնողքը և ազգականքը ողջ ալ ըլլան դարձեալ այդ կալուածք մահիւն կ'ըլլան, այսինքն որ հաստատութեան որ կը վերաբերէին ալ ևս անոր ժառանգութիւնը կը լինին:

Միայն թէ երբ վախճանելոյն կինը իւր ամուսնոյն մահուընէն յետոյ մինչ ինն ամիս զաւակ մը ծնի բնականաբար վախճանելոյն հարազատ (սուլպի) որդին կը նկատուի որով նորա ժառանգորդը լինելով մահիւն ին տէր կ'ըլլայ, ուստի այսպիսի պարագայից մէջ երբ կառավարութիւնը Մահիւն վրայ ձեռք կը դնէ կիներն պարտին անմիջապէս պիտի եղածն իմաց տալ որպէս զի ապագային մէջ յօգնութիւն եւ զրկանք չի կրեն:

Հ. Առանց որդւոյ վախճանեալ աշխարհական մը երբ մի միայն դրամ, ապրանք եւ կահ կարասիքի պէս փոխադրական գոյքեր թողու, ասոնք որու կը վերաբերին:

Պ. Ընդհակառակը այսպիսի գոյքեր որչափ ալ մեծ արժէք ունենան հոգ չէ իւր օրինաւոր ժառանգորդացը (վէրէսէ) կը վերաբերի, բայց երբ ամենեւին ժառանգորդ չը գտնուի, գոյքերուն ամէնքն ալ պէ՛յթիւմալը (Տերութեան գանձը) կը գրաւէ:

Հ. Առանց որդւոյ մէկը երբ փափաքի որ իւր

վագ՞ կալուածը իւր մահուընէն յետոյ մահիւն չըլլայ, այլ իւր պարագայիցը մնայ, ինչ ընել պէտք է:

Պ. Իւր կալուածը թէ շէնք ըլլայ եւ թէ գետին այսօր ինչ որ կարժէ իւրաքանչիւր հաղարին նախնական տուրք (մուսճճէլէ) ըլլալով մէկ անգամու համար 30 զըշխակ տարուէ տարի ալ մէկ մէկ զըուշ տուրք վճարելու է:

Եէնքերու (մուսագգաֆաթ) եւ գետիններու (միւսթաղիլաթ) արժէքը ներկայ վիճակին համեմատութեամբը հմուտ (էհլի վուգուֆ) անձանց կողմանէ կորոշուի:

Հ. Այսպիսի առանձնաշնորհեալ ստացուածոց ժառագականութիւնը ինչ կարգով կը կատարուի:

Պ. Վախճանեալը եթէ թոռներ ունի, մի միայն թոռներուն, և եթէ չունի իւր ծնողացը. և եթէ ասոնք չը կան հարազատ (ի էպէվէյն) եղբորը և քրոջը՝ և թէ որ ասոնք ալ չը կան հօր կողմանէ հարազատ եղբորը եւ քրոջը. և եթէ ասոնք ալ չը կան մօր կողմանէ հարազատ եղբորը՝ և թէ որ ասոնք ալ չը կան իւր ամուսնոյն կամ կնկանը կիցնայ:

ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՑՈՒՄ (միւրուրի զէման)

Հ. Փախստական (ֆիրարի) պտտող պատժապարտ մը (միւճրիմ) որչափ ժամանակ անցնելէ յետոյ հալածումէ եւ պատիժէ ազատ կը մնայ:

Պ. Եթէ պատժապարտին բրածը թերուծիւն (գապահաթ) մէ վերջին վճիռն տրուած թուականէն 2 տարի յետոյ, եւ եթէ եղեռն (ճիւնհա) մէ վերջին վճուոյն թուականէն 5 տարի յետոյ, և թէ որ ռճիր (ճինայէթ) մէ վերջին վճիւրը տրուած թուականէն մինչև 20 տարի յետոյ եթէ երբէք ողջ մնայ, հալածումէ կ'ազատի եւ կրնայ իւր երկիրը վերագտնալ, միայն սա պայմանաւ որ ոճրագործներն իրենց հակառակորդացը կամ անոնց ազգականացը բնակած տեղը չեն կրնար բնակիլ:

Հ. Ու եւ է յանցանքի մը (ճիւրմ) համար մինչեւ երբ կարելի է դատ բանալ, որպէս զի ընդունելի ըլլայ:

Պ. Թերուծեալն (գապահաթ) տեսակէն եղող յանցանքներուն համար մինչ մէկ տարի, իսկ եղեռնի (ճիւնհա) տեսակէն եղողներուն համար մինչև 3 տարի, և ոճրագործութեանց (ճինայէթ) համար ալ մինչ 10 տարի չանցած կարելի է դատ բանալ. երբ այս միջոցներն անցի (այսինքն մուրրի զէման ըլլայ), բացուած դատը՝ եթէ երբէք դատարանի ներկայացած կամ քննութիւն կատարուած չէ ալ լսելի չի կրնար լինել. ուրեմն ուշագործութիւն:

Հ. Սոսնելիքի տալիքի և ժառանգական դատերն մինչեւ երբ կրնայ լսելի (մէսմու) ըլլալ:

Պ. Պայմանաժամին հասնելէն մինչ 15 տարի, և երբ այս միջոցը անցնի, ալ բան մը չեա կրնալ

պահանջել (տալա), թէ և ձեռքդ մուրհակ մը կամ այլ զորաւոր ապացոյց մը ունեցած ըլլաս:

Իսկ գալով վաճառականական գործոց ինչպէս փոշիչաի (փոխանակադիր) պօսօի և հալաչիի դատերուն, ասոնց համար ալ պայմանաժամին լրանալէն մինչ 5 տարի կրնաս բողոքել ապա թէ ոչ բողոքդ ապարդիւն (պադդալ) կը մնայ:

ԽԱՐՃ (տուրք)

Հ. Սնցազիրներու (մուրուր թէգքէրէսի) տուրքը որչափ է եւ ինչ պայմանաժամ ունի:

Պ. Օսմանեան երկիրներու համար 10 իսկ օտար երկիրներու համար 50 դրուշ ըլլալով, մինչեւ մէկ տարի պայմանաժամ ունի: Ուստի երբ այս պայմանաժամը անցնի՝ ալ անգործածելի կըլլայ, և գործածողք տուգանքի կը հանդիպին:

Հ. Երբ մէկը ընտանեօք ճամբորդելու ըլլայ, իւր կնոջը և զաւակներէն ամէն մէկուն համար զատ զատ թէգքէրէս առնել հարկ է:

Պ. Ոչ, այլ կայսերական կառավարութիւնը՝ սա պէս թոյլատուութիւն մը ըրած է որ ճամբորդին կինը՝ և 15 տարեկանէն վար մանչ ազջիկ զաւակունքը՝ ասանց տուրքի, մի և նոյն թէգքէրէի մէջ կարճանագրուին:

Հ. Հուգուգի վերաբերեալ դատի մը համար, անպատճառ տրուելիք գլխաւոր տուրքերն որո՞նք են:

Պ. Ա. Աղերսագրոյն գայսիյեն (արձանագրու-
թեան ծախք) 5 շրշ.

Բ. եթէ դատախազը փոխանորդ ունի ասոր
վեֆեայեթնաւէ ին (փոխանորդագիր) Թասիզըյ-
եէն (վաւերացման ծախս կամ տուրք) 50 շրշ.
եւ 10 շրշ. ալ բուշի ստակ.

Գ. ինզարիյե բուսուշասը (կոչման գիր) 5 շրշ.

Դ. Թէպշիդիյե (գրութիւն մը հաղորդելու
ծախք) 10 շրշ.

Ե. խնրեթի գասեմիյե (միւպաշիրին համբու-
յօգնութեան վարձքը) 5, 10 շրշ. կամ աւելի՝
տեղւոյն հեռաւորութեան (մէսաֆէ) համեմատ:

Այս վերջին երեք տուրքերն մէկ անգամու հա-
մար չէ, այլ ամէն անգամուն անպակաս դարձ-
եալ կանոնի:

2. Խարճի իշաւ (վճռագրոյն տուրքը): հարիւ-
րին 2. շրշ. (1):

(1) Բայց 500, 1000, 2000, 3000, 5000 շրուշներն
միութիւն կը բռնուին, այսինքն երբ դատը՝ 1001 էն
մինչեւ 2000 շրուշի վրայ է 2000 ի հաշուով 40 շրշ,
եւ եթէ 5001 էն մինչեւ 5000 շրշի ի վրայ է 5000 ի
հաշուով 100 շրշ. կ'անուի. իսկ հինգ հազարէն մինչեւ
500,000 իւրաքանչիւր հազարի համար քսանական շրշ.
կը հաշուի:

Խարճի իշաւ ին մէկ քառորդը՝ բուշի խարճ կ'ըն-
ուի որ դեռ դատաստանի չ'ըստուած, նոխապէս
կ'անուի. զոր օրինակ եթէ դատը՝ 5000 շրշ վրայ է
հարիւրին 2 հաշուով խարճը իլամը՝ որ 60 շրշ. կ'ընէ,
ասոր մէկ քառորդը որ է 15 շրշ. նախապէս կ'առ-
նուի:

Է. Սուրէրը իշաւ (վճռագրոյն օրինակը) 30 շրշ.
Թէպշիդիյե, 10 շրշ:

Սոյն ծախքերէն մի միայն թէպշիդիյե ե խարճի
իլամին քանակութիւնը նախադատ դատարան-
ներուն յատուկ է, իսկ մնացեալներն առ հասա-
րակ ամեն դատարանի կը վերաբերին. ուստի դի-
ցուք թէ դատը 6 ոսկույ համար ըլլայ, դատա-
խազը պարտաւոր է բաց ի իւր փոխանորդին
վարձքէն՝ վերի հաշուով առ նուազն 150 շրշի
ծախս մը ընել, զորս ամբողջապէս իւր հակա-
ռակորդէն պիտի առնէ, երբ որ իրաւացի ելնէ:

Այսու ամենայնիւ գործը այս չափով ալ չի
լինար. քանզի երբ այս իլամին վրայ չի կրնաս
քու առնելիքը բրցնել, այն ատեն ստիպեալ ես
իճրա մէմուրիին (գործագիր պաշտօնեայ) դիմել,
ուր նորանոր ծախքեր պիտի ընես որպէս զի քու
հակառակորդը բերել տալով քիչ շատ բանի մը
կապէ, այն ալ եթէ պարտականդ ունի նէ^{օօ}:

ԳԱԹԻԱՆ ՏԵՐԱՆ (վերջնական կերպով ծախել)

Հ. երբ մէկը իւր տունը (մէնզիլ) ե կամ այլ
անշարժ ստացուածքը ծախելու ըլլայ որչափ
տուրք (խարճ) պիտի վճարէ:

Պ. Թէ որ ստացուածքը վազճ մ'է քանի շրշի.
որ պիտի ծախէ 1,000ին 30 շրշ. իսկ եթէ միւշի-
մէ 1,000 ին 10 շրշ. պարտի վճարել:

Հ. Անգամ մը կատարուած ֆէրաղներն կա-
րելի է լուծել (ֆէսխ) :

Պ. Այո այո, երբ բռնութեամբ կամ խաբէու-
թեամբ (հիյլէ վէ իզֆալ) կատարուած ըլլայ՝
ինչպէս երբ մէկը վախցնելով (թէհտիտ) կամ ու
է խաբէութեամբ մը՝ ինչպէս քեզի կ'առնեմ կամ
մինչ ցմահ (իլէլ վէֆաթ) կը պահեմ կը խնամեմ
(ինֆագ ու խաչէ իտէրիմ) ըսելով, դիմացինին
տունը կամ խանութը կամ այգին և այլ ուրիշ
ստացուածքը իւր վրայ ֆէրաղ (դարձնել) ընել
տայ. իւր դիմացինը չի դոհացուցած ժամանակ
դատարանը այդ ֆէրաղը կը ջնջէ (լաղվ). մինչև
իսկ եթէ ֆէրաղ ըլլալէն յետոյ ծախուած կամ
գրաւ դրուած ալ ըլլայ :

ԻՍԹԻԼԼԱԼ ԿԱՄ ՎԷՖԱԷՆ ՖԵՐԱՂ

(անշարժ կալուած մը գրաւ դնել)

Հ. Թէ որ մէկը իւր վազֆ տունը կամ խանու-
թը կամ ու է գետինը՝ իսթիլլալ ընել ուզէ որ-
չամի տուրք պիտի վճարէ :

Պ. Վանի զրուչի որ գրաւ դնէ իւրաքանչիւր
հազարին ԱՅ զրուչ տուրք (խարճ) պիտի վճարէ :

Հ. Եւ եթէ այդ շէնքը կամ գետինը իսթիլլա-
լէ հանել ուզեմք դարձեալ տուրք տալ պէտք է :

Պ. Այո, դարձեալ հազարին ԱՅ պէտք է տալ :

Հ. Իսթիլլալ եղած տուն մը կամ խանութ մը
երբ այրի միթէ, փոխատունին (իսթիլլալճի) իրա-
ւունքը կը կորսուի :

Պ. Ոչ. քանզի կալուած մը իսթիլլալ ընել ոչ
թէ էապէս ծախել ըսել է, այլ սոսկ գրաւ դնել
է, ուստի երբ այս գրաւը պատահմամբ այրի
կամ վրասուի պարտականը իւր պարտքէն ազա-
տած չըլլար :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ (միւթէնէվլիա)

Հ. Երբ մէկը անղաւակ (պիլա վէլէտ) մեռնե-
լով վազճ կալուածը մահչիալ ըլլայ, իւր պար-
տուց փոխարէն կրնայ ծախուիլ :

Պ. Ո՛չ քանզի անղաւակ մեռնելուն պէս այդ
կալուածը մահչիւլ կ'ըլլայ, և «վազճ պորճ Էօսե-
մեզ» հանրածանօթ ասացուածէն ալ ինչպէս որ
կիմացուի, պարտատէրերն այդ կալուածէն բան
մը չեն կրնար առնուլ :

Այլ սակայն եթէ պարտքերուն մէջ ննջեցեալին
թաղման ծախքեր կան, միւխայն անոնք վազֆի
անտուկը կը վճարէ :

Հ. Երբ մէկը քու գործիդ մէջ առանց բան մը
ուզելու ծառայութիւն մատուցանէ (իֆաի խըտ-
մէթ, վերջէն բան մը պահանջելու իրաւունք
կունենայ :

Պ. Եթէ պայմանադրութիւն մը չես ըրած, և
այդ մարդն ալ իւր կատարած գործին մէջ վարճ-
քով աշխատող մէկը չէ, բան մը պահանջելու ի-
րաւունք չունենար, զոր օրինակ,

Երբ դատ մը ունենաս, և ծանօթներէդ այն

ինչը որ վկայեալ (չէհատէթնամէլի) փաստաբան չէ, բայց իբր փաստաբան, սքու կողմանէդ փոխանորդութիւն ընէ եւ օրերով աշխատի, եթէ իրեն բան մը տալ խօստացած չես ի վերջոյ ստակ մը անդամ չի կրնար պահանջել:

Նաև երբ մէկը օրինաւորապէս բժիշկ ճանչցուած չէ, եւ որ և է հիւանդի մը օրերով ձրիարար (մէճճանէն) հոգ եւ դարման կը տանի, այս ծառայութեանցը փոխարէն յետոյ բան մը չի կրնար պահանջել:

Հ. Երբ տուն մը կամ ուրիշ տեսակ շէնք մը միւշթեռեխ ըլլայ այսինքն մէկէն աւելի տէր ունենայ, եւ ասոնցմէ մին ինքն իւր գլխուն նորոգութիւններ (թամիրաթ) ընէ, յետոյ իւր ընկերներէն բան մը պահանջելու իրաւունք կունենայ:

Պ. Եթէ իւր ընկերներէն հաւանութիւն կամ դատարանէ մը հրաման (իզն) առած չէ, եղած ծախքէն իւր ընկերներուն բան մ'ալ չիյնար:

Հ. Երբ տուն մը կամ արտ մը կամ որ և է անշարժ ստացուածք մը միւշթեռեխ ըլլայ, այսինքն քանի մը տէրեր ունենայ, այս տէրերէն մին ինքնիրեն իւր մասը (հրստէ տիրէք) կրնայ ուրիշի մը վարձու տալ (կյճար):

Պ. Ո՛չ երբէք, այլ իւր մասը իւր ընկերներուն (հրստէտար) կրնայ տալ, բայց եւ այնպէս երբ տանուտէրերն ամէքն ալ հաւանին (միւվաֆադաթ) այդ ասնը կամ այլ ստացուածքին մէկ

մասը կամ ամբողջը ուրիշի մը վարձու կրնայ տրուիլ:

Հ. Դատախազեայը (միւտտաի ալէյհ) երբ ուրիշ տեղ մը, կամ երկիր մը գտնուի. դատախազը կրնայ զանի իւր գտնուած տեղւոյն դատարանը բերել:

Պ. Ոչ. այլ դատախազեայը ուր տեղ որ կը գտնուի դատախազը (միւտտաի) այն տեղւոյն դատարանին անձամբ (պիզզաթ) դիմելու կամ իւր տեղը փոխանորդ մը խրկելու պարտաւոր է:

Հ. Երբ մէկը իւր բովը գրաւ մը ունենայ, առանց պարտականին հաճութեանը (րիզա) ինքնին (խօտպէխօտ) կրնայ ծախել:

Պ. Ոչ երբէք. հապա երբ պարտքին պայմանաժամը գայ, և գրաւին տէրն (րահին) ալ իւր պարտքը չի վճարէ այն ատեն պէտք է որ առնելիքուորը դատաւորին դիմէ (միւրաճաաթ) որպէս զի նա ծախել տայ:

Հ. Պատժապարտք (միւճրիմին) բոլորովիններման կրնան արժանանալ (մազհար աֆիվ օլապիլուրէր մի):

Պ. Ոչ. այլ վեհափառ Կայսրը (Չաթը չէվքէթ սիմաթը հազրէթի չէհրիեարի) Յրգարութեան գլուխ կանգնելով հանդերձ կարող է եթէ փափաքի, իւր առատ գթութեամբը (քէսրէթի չէֆէզաթ ու մէրհամէթ) եւ բացարձակ իշխանութեամբը (իրատէի մութլազա) պատժոյն պայմանաժամը պակսեցնել (թէնգիս), մահուան (ի-

տամ) վճիռը՝ տաժանելի աշխատութեանց, (քիւ-
րէկ) իսկ քիւրէկինը՝ բերդարդելու թեան, (գալա
պէնա) եւ բերդարդելութիւնը՝ մշտնջենաւոր
(միւէպպէտ) կամ ժամանակաւոր (մուվազգաթ)
աքսորման փոխել:

Հ. Բայց ո՞ր պարագայից մէջ յանձաւորք եր-
բէք պատիժ չեն կրեր.

Պ. Երբ յանձաւորք մեղքը գործած ժամանակ
արդէն խնթեցած կամ ցնորած եւ կամ թէ մա-
նուկ մը լինի.

Նաևս երբ մէկը իւր պատիւը (ըրզ) կամ ան-
ձը (նէֆսինի) պաշտպանելու համար ակամայ
ստիպուած ըլլայ իւր նախայարձակ թնամին ու-
ժաթափ ընել պատիժէ ազատ կը թողուի:

Հ. Երբ Օսմանեան հպատակներէն մին օտար
հպատակի մը հետ հուզուգի վերաբերեալ դատ
մը ունենայ, ասոնց դատը ո՞վ կը տեսնէ:

Պ. Հուզուգի դատարաններն կը տեսնեն, եթէ
վէճը կարուածի (էմլաք) կամ առ առաւելն 1000
զրշի վրայ է. իսկ եթէ այդպէս չէ այդպիսի խոռոն
դատերու (հուզուգը մուսթէլիզա) համար ա-
ռեւտրական Ս. ժողովը (պիրինճի մէճլիսի թի-
ճարէթ) սահմանուած (հատը) է ուր արուած ու-
րոշումը վերջնական է (տէրէճէի գազլիէ) այ-
սինքն ուրիշ ատենի մը առաջ իսթիւնաք եւ Թեմ-
եիզ չի կրնար ըլլալ, այլ միևնոյն ժողովայ մէջ
իստէի մուհաֆէմէ մը (վերակոչումն դատաստա-
նի) կրնայ ըլլալ: Իսկ եթէ դատը պատժական է,

գարձեալ Օսմանեան դատարանները կը տեսնեն:

Հ. Դատարանի առաջ ամէն ոք փոխանորդու-
թիւն կրնայ ընել (իճրաի վէքեալէթ):

Պ. Ոչ. այլ միայն վկայագիր (չէհատէթնամէ)
ունեցող փաստաբաններն (տավա վէքիլի). դա-
տախազին եւ դատախազելին ծնողքը եւ մեր-
ձագոյն ազգականները կամ շահակցական ընկե-
րը (չէրիք) կամ գրագիրը չեն կրնար ընել:

Հ. Օտար հպատակներն Օսմ. երկրի մէջ ուղ-
ղակի իրենց անուանը տեղ կրնան առնուլ:

Պ. Ոչ. վերջին տարիներն կայսերական հրա-
ման մը (իրատէի սէնիէ) ելած է, որոյ համեմատ
օտար հպատակներն բացի Հիճազի գաւառէն՝ ուր
կը գանուին Մահմետականաց սուրբ տեղերն, ու-
րիշ ամէն կողմ տեղ կրնան առնուլ (իսթիմլաք):

Հ. Երբ աւանդ (էմանէթ) մը կորսուի աւան-
դառուն պարտի տուժել (թազմին):

Պ. Ոչ. Բայց երբ հաստատուի թէ աւան-
դառուն դիտմամբ (գաստէն) կամ անհոգութեամբ
(թազսիլը իլէ) կորուսած է այն ատեն պարտա-
ւոր է տուժել:

Հ. Օսմանեան երկիրներուն (մէմալիքի մահրու-
սէի շահանէ) տեղական ստորաբաժանումները ու-
րոշք են, եւ իւրաքանչիւրն վարողներու ինչ ա-
նուն կը տրուի:

Պ. Ա. Վիշալէթ (ընդհ. կուսակալութիւն կամ
գաւառ) Բ. Ախլա կամ արևճազ (փոխ կուսակա-
լութիւն կամ գաւառակ) Գ. Գազա (վիճակ) Դ.

նահիջեէ (կիսավիճակ) Ե. Գարեէ (գիւղ) :

Գալով վարչութեան (իտարէ) Վիլայէթը կառավարողին Վալի (ընդհ. կուսակալ). Սանճադը կառավարողին Միւթէսարըֆի (փոխ կուսակալ). Գազան կառավարողին Գայմագամ (տեղակալ). Նահիյէն կառավարողին Միւտիր (կառավարիչ), իսկ Գարեէն կառավարողներու Մուխթարան (թաղապետք) կը կոչուի :

Հ. Երբ մէկը իւր կորսնցուցած կամ գողցուցած ինչքը ուրիշի մը ձեռք տեսնայ կրնայ զայն գրաւել :

Պ. Այն, Այն, ուրեմն այն ամեն անձինք որք իբր գրաւ բան մը կառնուն կամ ընդհանրապէս խեղճիւր է ըսելով բան մը կը գնեն վերջին ծայր զգուշութիւն պարտին ընել, եւ եթէ ծախող մարդուն վրայ վստահութիւն չունին երաշխաւոր մը առնելու են թէ սոյն ինչքը գողոն (մալի մէսրուգ) չէ, ապա թէ ոչ երբ օր մը բուն տէրը երեւան ելնէ (զուհուր) կրնայ զայն գրաւել առանց ստակ մը (հապպէի վահիտէ) իսկ վճարելու :

Գալով Փոխառութեան (իսթիքրաղ) եւ Երկաթուղիի և այլ ընկերութեանց արժէթղթոց որք թեպետե մէկ մէկ թիւ կը կրեն բայց անուանական (նամէ մուհարէր) չեն, այլ կրողին (համիլինէ) կը վերաբերին, ուստի այսպիսիներն երբ անգամ մը տէրը կորսնցնէ կամ գողցնէ, ուրիշի մը քով տեսած ժամանակ չի կրնար զայն գրաւել քանզի այսպիսի թղթերն բուն դրամի պէս են,

այսինքն առնել տալու մէջ երաշխաւոր չուղուիր. այսու ամենայնիւ այս կերպ պարագայից մէջ միայն մէկ միջոց մը կայ, որ է արժէթուղթը որով քով որ գանուի կառավարութեան կողմանէ հարցաքննութեան կենթարկուի, և երբ խօստովանի թէ միաւնաքար առած չէ այլ խիստ աժան եւ ծիծաղելի (էտնա) զնով մը առած է, որն որ գողութեան գլխաւոր ապացոյց մը կը համարուի, յայնժամ առանց ո եւ է փոխարինութեան ձեռքէն կառնուի եւ իւր տէրոջը կը յանձնուի :

Հ. Օսմանեան թղթատարութեան (բութա) տըրուած յանձնարարեալ (թէահհիւտլի) նամակ մը՝ երբ իւր բուն հասցէին (միւրսէլուն իլէյհ) ձեռքը չի հանի, սոյն պաշտօնատունը որքան տուգանք տալու պարտաւոր է :

Պ. 50 ֆրանք միայն և ոչ աւելի :

ԹԷԳԱԻՏ (Հանգստեան Թուակ)

Հ. Թէգաիտ ըսելով ինչ կը հասկցուի

Պ. Տերութեան պաշտօնէի մը՝ որոշեալ ժամանակ մը ծառայելէ յետոյ կամ սոյն ժամանակէն առաջ՝ պաշտօնէ դադրելով դարձեալ ամսական առնելն է, որն որ կը շարունակուի մինչ ց'մահ, եւ յետ մահուան այդ իրաւունքը իւր որդւոցը եւ կնոջը եւ ծնողացը կրնայ անցնիլ :

Հ. Միջիջեէի (քաղաքային) պաշտօնեայք Տերութեան քանի տարի ծառայելու են, որպէս զի Թէգաիտի արժանանան :

Պ. 30 տարի. բայց եթէ այս պայմանաժամը չի լրացած ու եւ է ակտի մը հանդիպին, եւ ալ պաշտօն շարունակելու անկարող գտնուին, քիչ կամ շատ որչափ ալ ծառայած ըլլան հոգ չէ, ամենէն վերջը ինչ պաշտօնի մէջ որ գտնուած են այդ պաշտօնի ամսականին կէտը՝ իբր հանգըստեան թոշակ ամսէ ամիս իրենց կը տրուի:

Հ. 30 Տարին լրացնող պաշտօնէի մը ինչ համեմատութեամբ թէգախոսի ամսական կը կապուի:

Պ. Թէգախոսի խնդրագիրը առած թուականէն դէպ ի ետ, 10 տարուան պաշտօնին ամսականներուն գումարը ինչ որ կընէ. ատոր մէկ տասներորդին 12էն մէկին կէտը ամսէ ամիս իբր հազատեան թոշակ իրին կը տրուի, զոր օրինակ

«Պաշտօնեայ մը իւր վերջին 10 տարուան պաշտօնին 6 տարին 960, չորս տարին ալ ամսական 1200 դր. առնէ 10 տարի յետոյ ընդ ամէնը 116,720 դրուչ առած կըլլայ որու $1/10$ ը է 11,672, եւ ատոր ալ 12 մասէն մէկը $972 \frac{8}{12}$, իսկ ատոր ալ կէտը $486 \frac{4}{12}$ ըլլալուն այսչափ միայն կը տրուի:

Հ. Երբ պաշտօնեայ մը թէգախոսի 30 տարին դեռ չի լրացուցած վախճանի, իւր զաւակացը եւ ընտանեացը՝ որչափ բան կը տրուի:

Պ. Երբ վախճանեալին ծառայութիւնը 15 տարիէ աւելի է, կնոջը՝ զաւակացը՝ մօրը՝ եւ մեծ մօրը՝ ամէնքը մէկանց, վախճանելոյն վերջին պաշտօնին մէջ առած ամսականին կէտը կը տրուի:

ու ի իսկ եթէ 15 տարիէն պակաս է մէկ քառորդը կը տրուի:

Եւ եթէ վախճանեալը՝ արդէն թէգախոս եղած է, իւր մահուանէ առաջ ինչ ամսական որ կառնէր, անոր կէտը իւր զաւակացը եւ ընտանեացը կը կապուի:

Հ. Վախճանեալին վերոգրեալ պարագայներէն ամէն մէկը իւր մասը առնելու համար ինչ պայման կայ:

Պ. Արու զաւակները՝ եթէ գործելու անկարող (ամէլմանտէ) չեն, 20 տարեկանէն վար ըլլալու են. ազջիկ զաւակներն՝ ալ առանց ամուսնոյ. իսկ մայրը՝ եւ մեծ մայրն ալ անուք (պիքէս) եւ կարօտ (պիւլայէ) ըլլալու են:

Հ. Երբ մէկուն մուրհակաւ մը (սէնէտ) ստակ կամ վաճառք (էմթիա) տաս, ինչ կերպ մուրհակ մը առնելու ետ սրպէս զի սպագային պարտականոց չի կրնայ ուրանալ եւ կամ զքեզ չի յօգնեցնէ:

Պ. Պէտք է որ հետեւեալ կերպով ի հրաւանի գրուած ըլլայ, բուն պարտականին ձեռքին գրովը:

Օ Ր Ի Ն Ա Կ

«Թօհաֆճի ճանկ աղա եէտինտէն Եիւզ սոէթ (100) լիրաի Օսմանի ախլ ու խթիգրազ էյլէտիմ. չու չարդ իլէ քի իչպու պին սէքիզ Եիւզ սէքսան տէօրթ սէնէսի չէհրի Մայրսըն իլք կիւնիւնտէն իթիպարէն գըրգ (40) կիւն վատէսի խիթ ամընտա, մէ պլայը մէղքիւրի ետ քէնտուսինէ վէ եախօտ Էնրինե Էսա իտէճէյիմ»:

կամ Հայերէն լեզուաւ այսպէս

«Թօհաֆճի ճանիկ աղաի ձեռքէն հարկեր հատ (100) Օսմ ոսկի փոխ առի, սա պայմանաւ որ այս 1884 տարուան մայիս ամսոյն սկիզբէն հաշուելով քառասուն (40) օր անցնելուն պէս, սոյն գումարը կամ իրեն եւ կամ թէ իւր հրամանին պիտի վճարեմ»

Յետոյ այս սէնէաներուն տակը դեռ ստորագրութիւն չի դրուած՝ պէտք է 60 շրջի. չափ տուրքով մը մուգալէրաթ մուհարրիիի (Նօտաբի) վաւերացնել տալ, և եթէ չի կրնաս գէթ թաղ. խորհրդոյ և կամ թէ էսնաֆին քեահեաին վաւերացնել տարու ես:

Գարով երաշխաւորութեան՝ այդ ալ այսպէս գրուելու է

«Մէտլազը մէգքիւրըն քեամիլէն էտասընա քէֆիլուն պիւ մալ օլաղղըմտան, պուրատա վազի իմզա իտէրիմ»

կամ Հայերէն լեզուաւ այսպէս

«Վերոյիշեալ գումարին վճարմանը երաշխաւոր եմ, վասն որոյ կստորագրեմ»

Երբ պարտականդ միայն կնիք դնել ուզէ. նա՛յէ որ քանի մը բառով ստորագրութիւն մ'ալ առնես:

Հ. Շէնք մը կամ գետին մը ուրիշի մը վրայ դառնալու (ինթիզալ) համար որչափ տուրք վճարել պէտք է:

Պ. Եթէ վազմ է 1000ին 1500ին կ եթէ Միւշ է 1000ին 5 շրջ:



